



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- ----- 2018 թվականի №...Ա  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ  
ՁԵՌՆԱՐԿՄՏԵՐ ՎԱՉԱԳԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի №757Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0896 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) անհատ ձեռնարկատերը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 14-ի №8Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 120 980 (հարյուր քսան հազար ինը հարյուր ութսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №371Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 91 824 (իննսունմեկ հազար ութ հարյուր քսանչորս) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի №ԵՄԴ/0018/04/16 վճռով անհատ ձեռնարկատերը սնանկ է ճանաչվել, և նույն

դատարանի 2018 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ սկսվել է գործունեության դադարեցման վարույթ,

զ) անհատ ձեռնարկատերը 2018 թվականի հոկտեմբերի 19-ին դիմել է Հանձնաժողով՝ իրեն տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով անհատ ձեռնարկատիրոջը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

ը) անհատ ձեռնարկատիրոջ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի դրությամբ կազմում է 59 421 (հիսունհինը հազար չորս հարյուր քսանմեկ) դրամ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №757Ա որոշումը,

2) 2015 թվականի հունվարի 14-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելը պարտավորեցնելու մասին» №8Ա որոշումը,

3) 2016 թվականի նոյեմբերի 29-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելը պարտավորեցնելու մասին» №371Ա որոշումը:

2. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի

մասով մինչև 2018 թվականի հոկտեմբերի 23-ը հաշվարկված 59 421 (հիսունինը հազար չորս հարյուր քսանմեկ) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ**

ք.Երևան  
----- 2018թ.